Ավետիք Իսահակյան

Ազատության զանգ

Ազատության Զա՛նգ, դու վե՛հ ղողանջե՛
Կովկասյան վսե՛մ, վե՛ս բարձունքներից,
Ինչպես մըրրիկ՝ շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիգապանծ ազատն Մասիս:

Անհագ վըրեժի և ընբոստացման,
Ե՛վ բուռն ցասման բարբառը հնչե՛,
Ժողովուրդների անկա՛խ, ինքնիշխա՛ն՝
Դաշն ազատական խրոխտ ղողանջե՛:

Լեռներից խրճիթ, և ձորերից – ձոր,
Եվ սրտերից սիրտ ձայնդ թո՛ղ թռչի,
Եվ ընդվըզումի պատգամդ հզոր
Հավիտյան անլուռ երբեք թո՛ղ չհանգչի;

Ըմբոստ ոգինե՛ր, թև առե՛ք, հասե՛ք,
Եվ զանգահարենք ամո՛ւր, միահամո՛ւռ.
Զանգն ազատության զանգահարեցե՛ք
Կովկասի համար հանո՛ւր, ընդհանո՛ւր:

Եվ որոտա՛, Զան՝գ, և արթնացըրու
Դարավոր նիրհից Մասիսն ու Կազբեկ,
Թափ տո՛ւր թևերդ, արծի՛վ լեռներո՛ւ,
Քընած առյուծներ, բաշերդ թոթվե՛ք:

Եվ բավական է՝ անարգ լրծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներրս շղթա,
Կապանք փշրելու մեզ թո՛ւյն ու կրրակ,
Մեզ ուժ և կորով, վրրեժ որոտա՛.

Եվ մեզ ամենքիս մրոնչա՛, կոչե՛
Մահվան ու փառքի դաշտը պայքարի.
Սրրբազան ռազմի շեփորը գոչե՛
Ընդդեմ բռնության, ամբարիշտ Չարի:

Եվ ազատության նորոգ արևի
Ոսկի ներբողրդ, Զա՜նգ, զրվարթ հրնչե՛.
Բյուր գազաթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրության տոնին մեզ կանչե՛:

1903
Ղազարապատ